« 08 » հոկտեմբեր 2026թ. No 5817 – Ա

«ԻՄՊԼԱՆՏՈԼՈԳԻԱ - ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՒԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐԻ

Նոյեմբերի 14-15, 2026թ., ք. Երևան (Դավիթ Անհաղթ 10)

«Դիթրեյն» ՍՊԸ

- Թիրախային լսարան՝ բժիշկ-ստոմատոլոգներ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 20 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄՋ 16 տեսական կրեդիտ

- Կոնտակտ 094207679

Օր 1՝ նոյեմբերի 14 **Թեմա՝ Իմպլանտոլոգիա: Ստոմատոլոգիական այլընտրանքային բուժման ժամանակակից մեթոդները**	
08:00-08:30	Մասնակիցների գրանցում
08:30-09:00	Ողջույնի խոսքին զուգահեռ մասնակիցների գրավոր նախաթեստավորում
09:00-12:30	Իմպլանտոլոգիա. ինչպե՞ս է այն օգնում մեզ և ինչքան կարևոր է իմպլանտացիան մեր կյանքում Իմպլանտացիոն համակարգի ընտրության չափանիշներ Ստոմատոլոգիական իմպլանտների իրական դասակարգումը
12:30-13:00	Ընդմիջում
13:00-15:00	Անատոմիա և ֆիզիոլոգիա՝ անհրաժեշտություն հաջողված աշխատանքի համար Ինտեգրման հիմունքների տեսություն և սկզբունքներ. Օստեոգենեզի մեխանիզմները. Ոսկրային ռեզորբցիա – դասակարգումները Ախտորոշում և բուժման պլանավորում,հիվանդի հետազոտում Ռենտգենաճառագայթային պատկերներ և համակարգչային տոմոգրաֆիա: Բուժման պլանի ստեղծումը հիվանդի և մոդելների հետ համատեղ
15:00-16:00	Ընդմիջում
16:00-18:30	Սենյակի և հիվանդի նախավիրահատական պատրաստումը, ստերիլիզացում և ախտահանում, վիրաբուժական սենյակի սարքավորումները, գործիքների ընտրություն, էրգոնոմիկա: Կտրվածքի ձևավորման և կարելու տեխնիկա Կլինիկական իրավիճակից կախված իմպլանտի դիզայնի և չափի ընտրության չափանիշներ: Վիրահատության ընթացքում և հետվիրահատական բարդությունների բուժում Կլինիկական դեպքերի վերլուծություն
Օր 2՝ նոյեմբերի 15 **Թեմա՝ Օրթոպեդիա**	
09:00-12:30	Իմպլանտների վրա պրոթեզային կառուցվածքների պլանավորում և վերլուծություն Իմպլանտի միացման տեսակները՝ աբաթմենտ/լրամաս Առավելություններն ու թերությունները Աբաթմենտները/լրամասները՝ ցեմենտի, պտուտակային, ցեմենտապտուտակային ամրացման և շարժական պրոթեզների ամրացման համար.
12:30-13:00	Ընդմիջում
13:00-15:00	Իմպլանտների վրա պրոթեզավորման կլինիկական և լաբորատոր փուլերը. Ցեմենտացման համար աբաթմենտների ընտրություն (ուղիղ, անկյունային,

	անհատական): Աբաթմենտների ընտրության չափանիշները: Ցեմենտների տեսակները. Մշտական կամ ժամանակավոր - որն է ավելի նպատակահարմար և երկարակյաց: Իմպլանտների վրա շարժական կառուցվածքներով պրոթեզավորում Որքա՞ն է իմպլանտների նվազագույն քանակը և դրանց տեղադրումը շարժական պրոթեզավորման ժամանակ Շարժական պրոթեզների պատրաստումը՝ գնդաձեւ աբաթմենտների և լոկատորների հիման վրա
15:00-16:00	Ընդմիջում
16:00-19:00	Ձեռքի հմտություն - մոդելների վրա ինքնուրույն աշխատանք / իմպլանտի տեղադրում / սկանավորում /
19:00-19:30	Քննարկում և մասնակիցների պոստթեստավորում

Դասավանդող՝ Իգոր Օստրովսկի: